ՏԴ 74.01/09 ԴԻԶԱՅՆ

ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԸ ՈՐՊԵՍ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հրանտ Պետրոսի Պետրոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք.Երևան, ՀՀ
sham1914@gmail.com

Գրաֆիկական դիզայնում տեսական հարցերի համակարգված ուսումնասիրման պատմությունը սկիզբ է առնում 20-րդ դարի վերջին տասնամյակից, սակայն մինչ այսօր տրված չէ այդ տեսության հստակ շրջանակների սահմանումը: Ակադեմիական շրջանակներում կան տարբեր մոտեցումներ, սակայն հիմնականում գրաֆիկական դիզայնի առանձին տեսանկյունների և մասնավոր հարցերի վերաբերյալ: Հոդվածի խնդիրն է դիզայն հետազոտությունների, դիզայնի մասին գրված տեքստերի և դրանց վերլուծությունների համադրության միջոցով ստանալ ժամանակակից գրաֆիական դիզայնի, որպես հետազոտական ոլորտի նկարագրական վերլուծություն:

Առանցքային բառեր. *գրաֆիկական դիզայն, դիզայնի տեսություն, մեթոդաբանություն, գիտական հետազոտություն*

Ներածություն

«Գրաֆիկական դիզայն» տերմինը գրավոր կերպով առաջին անգամ հանդիպում է 1922թ. [1]: Տասնամյակների ընթացքում իմաստային առումով այն որոշակի զարգացման և փոխակերպումների է ենթարկվել՝ սերտորեն կապված լինելով գիտատեխնիկական, տեխնոլոգիական առաջընթացի և մարդկության սոցիալ-մշակութային արժեքների, սոցիալ-քաղաքական իրավիճակների հետ: Իր այսօրվա հիմնական նշանակությամբ գրաֆիկական դիզայնը, որպես առանձին մասնագիտություն, սկսում է ձևավորվել 20-րդ դարի երկրորդ կեսից [2]: Զուգահեռ սկսում է օգտագործվել պատկերային հաղորդակցության (անգլ.՝ visual) դիզայն տերմինը, որն իմաստային առումով առավել ընդգրկուն է, սակայն հետխորհրդային տարածաշրջանում դեռևս լայն կիրառում չունի:

Գրաֆիկական դիզայնի՝ որպես ակադեմիական ոլորտի հետազոտման պատմությունը բավականին կարճ է՝ մեկ, երկու տասնամյակ: Թեպետ դիզայնի մասին տեքստեր սկսել են գրվել դրա՝ որպես նախագծային մասնագիտություն ձևավորման առաջին տարիներից, սակայն դրանք աստիճանաբար են ակադեմիական և գիտական բնույթ ընդունել: Սկզբնական շրջանում հեղինակները գրում էին առավել նկարագրական ոճի աշխատանքներ դիզայն մեթոդների, գործընթացների մասին, որոնք հիմնականում ներբնագավառային բնույթ էին կրում և վերաբերում էին դիզայնի ֆորմալ կողմերին: Աստիճանաբար անցում կատարվեց դիզայնի

բովանդակային կողմերին վերաբերվող առավել մեկնողական և իմացաբանական տեքստերի [3]:

Խնդիր

Գրաֆիկական դիզայնը, լինելով մարդկային գործունեության հարաբերականորեն նոր և արագ զարգացող ու նոր իմաստներ ձեռք բերող ոլորտ, ինչպես նաև մշակութային և պատմական առանձնահատուկ երևույթ՝ ամբողջությամբ և բազմակողմանիորեն դեռևս նկարագրված և մեկնաբանված չէ: Ինչպես նշվեց, գրաֆիկական դիզայնի մասին տեսական և մեթոդական տեքստեր հիմնականում սկսել են գրվել վերջին երկու տասնամյակում, որը քիչ ժամանակաշրջան է առանձին տեսության ձևավորման համար: Տվյալ հոդվածը փոքր փորձ է տեսության ձևավորման այդ ճանապարհին:

Հետազոտության հիմնական հարցը՝ ինչ չափով և ինչ կերպ է գրաֆիկական դիզայնը հետազոտական գործունեության ինքնուրույն բնագավառ: Նպատակն է բացահայտել հետազոտական աշխատանքի հիմնական առանձնահատկությունները գրաֆիկական դիզայնում և դրա հետ կապված նախագծային և գիտական ոլորտներում, սահմանել գրաֆիկական դիզայնի, գիտական հետազոտման մեթոդների և հասարակագիտական մի շարք բնագավառների փոխհարաբերությունների հիմնական շրջանակը:

Հետազոտության թեման դիտարկված է արևմտյան հեղինակների, հետազոտողների աշխատանքների և մոտեցումների համատեքստում՝ պայմանավորված ոլորտի ձևավորման պատմության աշխարհագրությամբ: Մեթոդիկան հիմնված է դիզայն հետազոտությունների մասին գրված ակադեմիական և ոչ ակադեմիական, սակայն այդ շրջանակում որոշակիորեն ընդունվող տեքստերի համադրության, գրաֆիկական դիզայն հետազոտությունների ուսումնասիրման, վերլուծության, դասակարգման վրա:

Քննարկում

Դիզայն ոլորտում հետազոտությունները կարելի է դասակարգել երկու ընդհանրական խմբերում՝ տեսական և կիրառական, սակայն չկա հստակ սահմանագիծ: Սովորաբար հետազոտությունները միաժամանակ կրում են տեսական և կիրառական բաղադրիչներ:

Տեսական կամ հիմնարար հետազոտության մեջ հարցերը կառուցվում են ենթադրությունների և դատողությունների հիման վրա: Կիրառականի դեպքում գոյություն ունի որոշակի խնդիր և պահանջներ, և նպատակաուղղված է այդ խնդրի լուծմանը, հիմնականում չունենալով ընդհանրացված արդյունքներ՝ կաղապարներ այլ հետազոտությունների և նախագծերի համար, ինչպես տեսականում:

Ըստ [4]-ի, դիզայնում կան հետազոտության երեք հիմնական տեսակներ: Դրանք են՝ հետազոտություններ.

- դիզայն ոլորտի վերաբերյալ, որպես պատմական և մշակութաբանական երևույթ,
- դիզայն գործունեության և մեթոդների վերաբերյալ,
- իրականացվող դիզայնի միջոցով:

Առաջին տիպի աշխատություններն ուղղված են ստեղծագործական ոճերի, ուղղությունների, դպրոցների, պատմական ժամանակաշրջանների, առանձին անձերի կամ խմբերի ուսումնասիրմանը [5-7]:

Երկրորդ տեսակի հետազոտություններն ուղղված են դիզայնի գործընթացների նկարագրմանը, նոր տեսանկյունների բացահայտմանը, նախագծային նոր մեթոդների և մեթոդաբանությունների զարգացմանը: Հատկանշական օրինակներ են նույն թեմայի մասեր կազմող դիզայն մտածողության վերանայմանն ուղղված հոդվածները [3, 8], որտեղ մտածողությունը ներկայացված է որպես առանձնահատուկ մասնագիտական երևույթ:

Երրորդ տեսակի հետազոտություններում գրաֆիկական դիզայնը հանդես է գալիս որպես գործիք տարբեր ոլորտներ ուսումնասիրելու և ներկայացնելու համար՝ տեղեկույթի, տվյալների վիզուալացման (պատկերավորման), դասակարգման և ներկայացման միջոցով:

[9]-ում հետազոտությունների դասակարգումն արված է առավել ակադեմիական և համակարգված մոտեցմամբ՝ հիմնված Իլինոյսի տեխնոլոգիական ինստիտուտում հետբուհական հետազոտությունների իրականացման բնույթի և եղանակների վրա

- տեսական,
- փորձառական,
- մեթոդաբանական :

Ներկայացված են փորձառական և մեթոդաբանական մոդելները՝ որպես տվյալ ինստիտուտում ամենակիրառվողները:

Առաջինում արդյունքները հիմնականում կրում են միջբնագավառային բնույթ և նախատեսված չեն միայն մասնագիտական նեղ շրջանակներին: Այս տիպի հետազոտություններն առավել մոտ են գիտական (ավանդական իմաստով) լինելուն և առավելապես հիմնված են տեղեկատվության վերլուծության քանակական մեթոդների վրա:

Մեթոդաբանական մոդելում հետազոտման հիմնական նպատակը նախագծման կամ պրակտիկ գործունեության համար նոր մեթոդների մշակումն է կամ արդեն գոյություն ունեցողների նորովի ներկայացումը կամ նորովի համադրումները, նոր կիրառությունների հեռանկարներ ներկայացնելը:

Երկու մոդելներն էլ միջգիտակարգային բնույթ են կրում: Բերված օրինակներում հետազոտությունները հիմնվում են ինֆորմատիկայի, հոգեբանության, կառուցվածքային լեզվաբանության տեսությունների և մեթոդների վրա:

Դիզայն հետազոտությունները հաճախ ներկայացվում են մշակութաբանական և մարդաբանական խմբում: Այդ իսկ պատճառով առանձնացվել են հասարակագիտական հետազոտությունների երեք հիմնական տեսակները՝ նկարագրական, մեկնաբանական, որոնողական՝ հասկանալու և վերլուծելու համար գրաֆիկական դիզայնի օրինակը [10]:

Նկարագրական հետազոտություններն ուղղված են դիզայն գործունեության մաս կազմող կամ պարզապես առնչվող երևույթների, օրինաչափությունների ներկայացմանը կամ

վերաներկայացմանը: Այսպիսի հետազոտությունները հիմնականում պատասխանում են «ինչ» հարցին:

Մեկնաբանական հետազոտություններն ուղղված են բացահայտելու երևույթների, խնդիրների պատճառները: Նպատակը պատճառահետևանքային շղթայի կառուցումն է: Հիմնականում պատասխանում են «ինչու», «ինչպես» հարցերին: Այս երկու տիպի հետազոտությունները հիմնականում լինում են տեսական բնույթի և այստեղ կարող են ընդհանրացվել մեկ կատեգորիայում:

Որոնողական հետազոտությունների նպատակը օբյեկտների, երևույթների նոր կողմերի բացահայտումն է՝ որոշակի լուծումներ և մեթոդներ առաջարկելով: Այս հետազոտությունները պատասխանում են «ինչպես» հարցին՝ կրելով մեթոդաբանական բնույթ և երբեմն հիմնվելով գիտափորձերի վրա:

Հետազոտությունների տեսակները դասակարգվում են նաև մեկ այլ մոտեցմամբ՝ հիմնվելով տվյալների վերլուծության երկու հիմնական՝ որակական և քանակական մեթոդների վրա: Առաջինը հիմնվում է դիտորդի՝ հետազոտողի սուբյեկտիվ արձագանքների վրա: Հիմնավորված և փաստարկված լինելու աստիճանը ստուգվում է հղումների քանակով և դրանց գիտական արժեքով, վերլուծության համակողմանիությամբ և քննադատական բնույթով: Այդ իսկ պառճառով այստեղ բարձր օբյեկտիվության դժվար է հասնել, քան քանակական հետազոտություններում, որտեղ արդյունքները հիմնվում են թվային մեծությունների վրա:

Հետազոտության սկզբնական՝ նախագծի փուլում բավականին հեշտ է հայեցակարգի մշակումը որակականի դեպքում: Սակայն հիմնավորումների և ապացույցների ժամանակ պահանջվում է տեսական, փիլիսոփայական մտքի ճկունություն, տեսական դաշտի և մեթոդների, գրականության բավականաչափ տիրապետում: Քանակականի դեպքում հակառակ պատկերն է, երբ ընտրելով և կառուցելով ճիշտ մեթոդիկա, կարելի է ավելի հեշտությամբ հասնել հիմնավոր և հավաստի արդյունքների:

Կատարելով վերոնշյալ մոդելների և դրանցում կիրառվող մեթոդաբանությունների համեմատական վերլուծության ընդհանրացում, պայմանականորեն կարելի է առանձնացնել դիզայն գիտելիքի երկու տեսակ.

- Ֆորմալ՝ համակարգված և խիստ գիտական, գիտակարգային,
- Ոչ ֆորմալ՝ ինտուիտիվ և սովորույթային:

Օրինակները ցույց են տալիս, որ չկա հստակ սահմանազիծ դրանց միջև: Այս գիտելիքները խիստ փոխկապակցված են: Առանց ոչ ֆորմալ գիտելիքի տիրապետման հնարավոր չէ հասնել խնդիրների և հիմնահարցերի ամբողջական ըմբռնման: Ֆորմալ գիտելիքը, հատկապես մեթոդականը, իր հերթին շատ կարևոր է նախագծային ոլորտում առաջընթացի համար:

Եզրակացություն

Ընդհանրացնելով վերլուծության արդյունքները՝ կարելի է փաստել, որ գրաֆիկական դիզայնի տեսությունն այսօր առանձին գիտակարգ չէ: Հարացույցների և հետազոտական

մեթոդների հարաբերականորեն փոքր քանակը որոշակի արգելք են գրաֆիկական դիզայնում և դրա շուրջ ձևավորվող գիտական գիտելիքի զարգացմանն ու առավել ընդլայնմանը: Դրանով է հենց բացատրվում գրաֆիկական դիզայն երևույթի՝ որպես եզակի հետազոտական բնագավառի և միաժամանակ գործիքակազմի ու մեթոդների ամբողջության դիտարկմանն ու ընկալմանը ակադեմիական շրջանակում:

Սակայն գրաֆիկական դիզայնը կրում է «սեփական» գիտական գիտելիքն առավելապես կիրառական և մեթոդաբանական հետազոտություններում: Այստեղ «գիտական» տերմինը կրկին պայմանականորեն է օգտագործված՝ չհամապատասխանելով արդեն ձևավորված «դասական» գիտակարգերին:

Գրաֆիկական դիզայնի տեսությունը իր ձևավորման ընթացքի մեջ է: Այն սերտորեն կապված լինելով և հենց պրակտիկ գործունեության մասը կազմելով, ուղղակիորեն կրում է դրա զարգացման տենդենցների ազդեցությունը:

ГРАФИЧЕСКИЙ ДИЗАЙН КАК ОБЛАСТЬ ИССЛЕДОВАНИЯ

Грант Петросович Петросян

Национальный университет архитектуры и строительства Армении, г.Ереван, РА
sham1914@gmail.com

История систематического изучения теоретических вопросов в графическом дизайне начинается с последнего десятилетия 20-го века. До сих пор не дано четкого определения границ этой теории. В академических кругах существуют разные подходы, но в основном об отдельных аспектах графического дизайна. Основная задача сделать описательный анализ современного графического дизайна как область исследования, на основе синтеза дизайн-исследований, текстов о дизайне и анализа этих текстов.

***Ключевые слова**: графический дизайн, теория дизайна, методология, научное исследование*

GRAPHIC DESIGN AS A RESEARCH FIELD

Hrant Petrosyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
sham1914@gmail.com

The history of systematic study of theoretical issues in graphic design began in the last decade of the 20th century. There is no precise definition about the scopes of that theory still. There are various approaches among academics. But those issues are mainly concerned with particular aspects of graphic design. The main goal of the article is to represent graphic design as a research field by descriptive analysis based on synthesis of graphic design researches, texts about design and analysis of those texts.

***Keywords:** graphic design, design theory, methodology, scientific research*

References

1. Livingston, A., Livingston, I. (2012), *Dictionary of Graphic Design and Designers*. London, Thames & Hudson, pp.59
2. Hollis, R., (1994), *Graphic Design: A concise History*. London, Thames & Hudson, pp. 8
3. Kimbell, L., (2015), "Rethinking Design Thinking: Part I". *Design and Culture: The Journal of the Design Studies Forum*, vol. 3, iss. 3, pp. 285-306, DOI: 10.2752/175470811X13071166525216
4. Frayling, C. (1993), "Research in Art and Design". *Royal College of Art Research Papers*, vol. 1. no. 1, pp.5.
5. Burke, C. (2007), *Active Literature: Jan Tschichold and New Typography*. London, Hyphen, 336 p.
6. Rathgeb, M. (2006), *Otl Aicher*. London, Phaidon, 240 p.
7. Huygen, F. (2014), *Jurriaan Schrofer: Graphic Designer, Pioneer of Photo Books, Art Director, Teacher, Art Manager, Environmental Artist*. Amsterdam, Valiz, 425 p.
8. Kimbell, L. (2015), "Rethinking Design Thinking: Part II". *Design and Culture: The Journal of the Design Studies Forum*, vol. 4, iss. 2, pp. 129-148, DOI: 10.2752/175470812X13281948975413
9. Poggenpohl, S., Sato, K. (2003). "Models of Dissertation Research in Design". *Proceedings of the 3rd Doctoral Education in Design Conference*. Tsukuba, Japan, pp.183.
10. Bhattacherjee, A. (2012), *Social Science Research: Principles, Methods, and Practices*. CreateSpace Independent Publishing, pp. 6

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազայի ֆինանսավորմամբ «ՀՀ քաղաքաշինական, ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Պետրոսյան Հրանտ Պետրոսի, ճարտ. թեկն. *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. Քաղաքաշինության, ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., (+374)99700940, sham1914@gmail.com*

Петросян Грант Петросович, канд. арх. *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Градостроительства, архитектуры и строительства им. акад. Ал. Таманяна, н.с., (+374)99700940, sham1914@gmail.com*

Petrosyan Hrant, PhD in architecture *(RA, Yerevan) - NUACA, Problem Laboratory of Architecture and Construction after Academician Al. Tamanyan, scientific researcher, (+374)99700940, sham1914@gmail.com*

Ներկայացվել է՝ 03.11.2018թ.
Ընդունվել է տպագրության՝ 05.11.2018թ.